

**ՁեվԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՎ ՄԱԿԱՐԴԱԿԱՅԻՆ  
ԸՄՔՌԵՆՈՒՄՆԵՐԸ**

**Ա. Ե. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Լեզվի կառուցվածքը արդի հայ ակադեմիական և ուսումնական քերականություններում ավանդական քերականությունների օրինակով բաժանվում է չորս հիմնական մասերի (բաժինների)՝ հնչյունաբանության, բառագիտության, ձևաբանության և շարահյուսության (նույնատիպ ուսական քերականություններում քառագիտությունից առանձնացվում և որպես ինքնուրույն բաժին է ընդունվում նաև բառակազմությունը)։ Միաժամանակ նշվում է, որ այդ մասերից յուրաքանչյուրը ներկայացնում է մի առանձին մակարդակ՝ իր լեզվական հիմնական միավորով և ուսումնասիրության սեփական առարկայով։ Իրանով իսկ փորձ է արվում համատեղելու, զուգակցելու լեզվի կառուցվածքի ավանդական և մակարդակային ըմբռնումները։

Այդ զուգակցումը որոշ դեպքերում զերծ չէ հակասություններից, որ հատկապես ակնառու է ձևաբանության սահմանորոշման մեջ։ Բանն այն է, մակարդակային մոտեցման համար պարտադիր որոշ սկզբունքներ հետևողականորեն չեն գործադրված (կամ անտեսված են) հիշյալ քերականություններում։ Փորձենք հիմնավորել ասվածը՝ քննության առնելով ձևաբանության առարկայի մի քանի առավել տարածված քնորոշումներ։

«Ձևաբանությունն ուսումնասիրում է խոսքի մասերը, իբրև համակարգ, նրանց քերականական կարգերն ու հատկանիշները ձևային և իմաստային տեսակետից»<sup>1</sup>, — ասված է հայերենի ակադեմիական քերականության մեջ։ Հայոց լեզվի բուհական ձևաբանությունում կարգում ենք. «Ձևաբանությունը ուսմունք է բառի, նրա ձևերի և այդ ձևերի արտահայտած քերականական իմաստների մասին, խոսքի մասերի և նրանց հատուկ բառակազմական օրինաչափությունների մասին»<sup>2</sup>։ Ռուսերենի ակադեմիական քերականության մեջ գրված է. «Ձևաբանությունը լեզվի քերականական կառուցվածքի այն մասն է, որը միավորում է բառերի քերականական դասերը (խոսքի մասերը), այդ դասերին պատկանող քերականական (ձևաբանական) կարգերը և բառերի ձևերը»<sup>3</sup>։

Թեև այս երեք սահմանումները նույնական չեն, սակայն նրանց բոլորի մեջ էլ խոսքի մասերը համարված են ձևաբանության առարկան։ Սա ավանդական ըմբռնում է, որ չի արդարացվում մակարդակային մոտեցմամբ։ Ըստ լեզվի մակարդակային տեսության՝ յուրաքանչյուր մակարդակ պետք է ունենա իր հիմնական լեզվական միավորը, որը և կլինի նրա ու-

<sup>1</sup> Ա. Գ. Աբրահամյան, Ե. Ա. Պառնասյան, Հ. Ա. Օհանյան, Ժամանակակից հայոց լեզու, գ. 2, Եր., 1974, էջ 8։

<sup>2</sup> Մ. Ե. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1983, էջ 7։

<sup>3</sup> Русская грамматика, т. I, М., 1982, с. 453.

սումնասիրութեան հիմնական առարկան: Մյուս կարևոր պահանջն այն է, որ մակարդակները պետք է գտնվեն ստորակարգային, ենթադասային հարաբերութեան մեջ, այսինքն՝ յուրաքանչյուր ստորին մակարդակի միավոր պետք է հանդես գա որպես հաջորդ մակարդակի միավորի կազմիչ: Այս տեսակետից մոտենալով հարցին, անհնար է ցույց տալ այն ստորին և վերին մակարդակները, որոնց միավորները մի դեպքում հանդես գան որպես խոսքի մասերի բաղադրիչներ, իսկ մյուս դեպքում՝ որպես խոսքի մասերից բաղադրվածներ: Ըիշտ է, խոսքի մասերը արտաքուստ կարծեք թե ներկայանում են բառախմբերի տեսքով, բայց այդ չի նշանակում, թե նրանք կազմված են բառերից (ինչպես, ասենք, բառերը կազմված են հընչյուններից, և կամ նախադասութիւնները՝ բառերից): Իրականում յուրաքանչյուր բառ առանձին վերցրած, անկախ մյուսներից, արդեն իսկ որեէ խոսքի մաս է: Խոսքի մասերը միևնույն բառերն են՝ դիտված դրանց ամենաընդհանուր իմաստի դիրքերից: Նրանք լեզվական կարգեր են, բայց ոչ երբեք միավորներ: Եթե ընդունենք, որ վերոհիշյալ սահմանումներում խոսքի մասեր տերմինը առնված է միայն լեզվական կարգ (և ոչ լեզվական միավոր) իմաստով, ապա այդ դեպքում էլ հնարավոր չի լինի հստակ որոշել, թե դրանցում ինչն է համարված ձևաբանութեան հիմնական միավորը: Առաջին քնորոշման մեջ այդ մասին որեէ ակնարկ չկա, երկրորդի մեջ հիշվում են բառը և նրա ձևերը, երրորդում՝ բառի ձևերը, մասամբ էլ՝ բառը: Ընդհանրապես նկատելի է, որ դրանցում հստակ չեն տարբերակված լեզվական միավոր, քննութեան առարկա և ուսումնասիրութեան նպատակ (խնդիրներ) հասկացութիւնները:

Ինքնին հասկանալի է, որ լեզվի կառուցվածքի յուրաքանչյուր մակարդակի (կամ մասի) քննութեան առարկան առաջին հերթին տվյալ մակարդակի լեզվական միավորն է: Բայց ինչպես հայտնի է, ստորին մակարդակի լեզվական միավորները հանդես են գալիս նաև վերին մակարդակներում, հետևապես և նրանց լիակատար նկարագրութիւնը մեկ մակարդակի սահմաններում հնարավոր չէ: Քննութեան առարկան որոշում է այն շրջանակները, որոնց ներսում պետք է կատարվի տվյալ միավորի ուսումնասիրութիւնը: Այսպիսով, քննութեան առարկան լեզվական միավորն է՝ դիտված որոշակի հայեցակետերով, որոշակի սահմաններում: Երբ ասում ենք, թե ձևաբանութեան առարկան են քերականական կարգերը, թույլ ենք տալիս երկու կարգի անճշտութիւն. ա) հավասարութեան նշան ենք դնում քննութեան առարկա և քննութեան նպատակ (կամ ուսումնասիրութեան խնդիրներ) հասկացութիւնների միջև, քանի որ քերականական կարգերի վերհանումը նպատակ է, վախճանակետ. բ) նեղացնում ենք քերականական կարգ հասկացութեան էութիւնը՝ փաստորեն այն նույնացնելով ձևաբանական կարգ տերմինին: Այնինչ, լեզվի մեջ մաքուր ձևաբանական կարգեր գոյութիւն չունեն, կան միայն ձևաբանական-շարահյուսական, այն է՝ քերականական կարգեր: Պարզ է, որ այսպիսի ըմբռնման դեպքում հնարավոր չէ քերականական կարգը ամբողջովին ներկայացնել՝ մնալով ձևաբանութեան շրջանակներում: Այսպես, պարզվում է, որ առանց շարահյուսական մակարդակին դիմելու անհնար է սպառիչ ներկայացնել զուտ ձևաբանական թվացող այնպիսի երևույթ, ինչպիսին գոյականի թվի կարգն է: Ձևաբանութիւնը գտնում է, որ գոյականը կարող է լինել կամ եզակի, կամ հոգնակի. այլ կերպ այն հանդես չի գալիս: Ըստ որում արդի գրական հայերենում հոգնակիութիւնն արտահայտվում է եր, ներ և այլ մասնիկներով, իսկ եզակիութիւնը՝ այդ մասնիկների բացակայութեամբ: Սակայն շարահյուսական մակարդակում պարզվում է, որ զգալի կիրառութիւններում եզակիի

կամ հոգնակիի ձևերը անպայմանորեն չեն ենթադրում եզակիության կամ հոգնակիության իմաստներ: Այն բոլոր դեպքերում, երբ գոյականն առնչված է ոչ թե կոնկրետ-առարկայական, այլ ընդհանուր-հասկացական իմաստով, շեղոք է թվի նկատմամբ<sup>4</sup> (համտ. ծնողը պարտավոր է խնամել զավակին և ծնողները պարտավոր են խնամել զավակներին նախադասությաննները, որոնք արտահայտության պլանում տարբեր լինելով՝ նույնական են բովանդակության պլանում): Ձևաբանության ոլորտում այս երևույթը հնարավոր չէ պարզել, քանի որ այնտեղ բառաձևը դիտարկվում է ինքն իր մեջ, կոնկրետ կիրառություններից վերացարկված ձևով:

Ընդհանրապես պետք է նկատի ունենալ, որ լեզվի կառուցվածքի ստորին մակարդակներում ու ենթամակարդակներում հանդես եկող և ոչ մի կարգ չի կարող լիովին բացահայտվել միայն տվյալ մակարդակի կամ ենթամակարդակի ոլորտներում. այդտեղ նրանք ներկայանում են հիմնական կողմերով, բայց ամբողջությամբ բացահայտվում են միայն ամենավերին՝ շարահյուսական մակարդակում:

Խոսքի մասերի քննությունն ու դասակարգումը համարելով ձևաբանության մենաշնորհը (ինչպես դա արված է ձևաբանության ավանդական ըմբռնմանը հետևող բոլոր քերականություններում), մենք թույլ ենք տալիս մի շարք հակասություններ և անճշտություններ, որոնք հաճախ կարելի է բացահայտել նաև առանց մակարդակային տեսությանը դիմելու:

1. Հանրահայտ է, որ խոսքի մասերը բնորոշվում են ոչ միայն ձևաբանական, այլև իմաստաբանական, շարահյուսական, բառակազմական հատկանիշներով: Այս բացահայտ ճշմարիտ տեսակետի դեմ ոչ ոք չի առարկում: Ավելին, լեզվաբանների մեծ մասը խոսքի մասերը համարում է ոչ թե ձևաբանական կամ քերականական, այլ բառաքերականական կարգեր՝ դրանով իսկ ընդգծելով նրանց թե՛ բառական, թե՛ քերականական արժեքը: Այստեղից տրամաբանորեն հետևում է, թե խոսքի մասերը ոչ միայն ձևաբանության, այլև բառագիտության և շարահյուսության ուսումնասիրության նյութ են: Շատ բնական թվացող այս հետևությունը սովորաբար շրջանցվում է լեզվի տեսաբանների կողմից:

2. Որպես խոսքի մասերի զուտ ձևաբանական հատկանիշ բոլորի կողմից միահամուռ նշվում է նրանց թեքվելու ունակությունը (շատ թե քիչ տարածում և ընդունելություն գտած որևէ այլ ձևաբանական հատկանիշ դժվարանում ենք նշել): Այս նշանակում է, թե ձևաբանական արժեք է վերագրվում միայն թեքվող խոսքի մասերին, թեև ձևաբանության մեջ քննվում են նաև այն խոսքի մասերը, որոնք իրենց իսկ հեղինակների խոստովանությամբ ձևաբանական յուրահատկություններ չունեն (չեն թեքվում):

3. Այն հանգամանքը, որ բառաիմաստաբանության մեջ, որպես կանոն, բառի խոսքիմասային իմաստները չեն քննվում, ենթադրել է տալիս, թե քերականները հակված են դրանք համարելու քերականական և ոչ թե բառային իմաստներ: Այնինչ, ճշմարտություն է, որ քերականական իմաստ կարող է արտահայտվել միայն քերականական ձևի միջոցով, իսկ խոսքիմասային իմաստներն արտահայտության ուրիշ ձև չունեն, քան բառերն են: Եթե նույնիսկ ընդունենք, որ խոսքիմասային իմաստները ըմբռնվում են որպես բառաքերականական և ոչ թե զուտ քերականական իմաստներ, ապա միևնույն է դրանք առաջին հերթին պետք է ներկայացվեն բառաիմաստաբանության մեջ:

<sup>4</sup> Ա. Խաչատրյան, Հայերենի որոշիչ հոդի մի շարք առանձնահատկություններ, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1975, № 4, էջ 104:

4. Բոլոր շատ թե քիչ ընդունելությունն գտած ամբողջական քերականություններում (լայն առումով) լեզվի կառուցվածքը, որպես կանոն, ներկայացվում է հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն, շարահյուսություն անխախտ հաջորդականությամբ: Մասից դեպի ամբողջը (նվազագույնից դեպի առավելագույնը) կամ ներքևից դեպի վերև գնացող քննության այս եղանակը դարերով փորձված և արդարացված մեթոդ է: Նրա (և ոչ միայն նրա) հետևողական գործադրումը պահանջում է տրամաբանական որոշակի կանոնների խստիվ պահպանում՝ չխախտել նյութի քննության հաջորդականությունը (թույլ շտալ ետևառաջություն), աստիճանականությունը (նախորդ աստիճանում հանդես եկող երևույթը չբացատրել հաջորդ աստիճանում դրսևորվող երևույթով), խուսափել կրկնություններից և այլն: Երբ խոսքի մասերը համարում ենք բառաքերականական կարգեր, սակայն նրանց քննությունը սկսում ենք ձևաբանության ֆաժնում, ապա խախտում ենք հաջորդականության սկզբունքը, քանի որ դրանք առաջին անգամ հանդես են գալիս քառագիտության մեջ: Երբ խոսքի մասերը ներկայացնում ենք ձևաբանության մեջ, բայց նրանք դասակարգվիս հաշվի ենք առնում նաև շարահյուսական հատկանիշները, ապա թույլ ենք տալիս ետևառաջություն, քանի որ շարահյուսության ուսումնառությունը հաջորդում է ձևաբանությանը: Երբ ձևաբանության մեջ քննում ենք խոսքի մասերի կազմությունը, ապա կատարում ենք նյութի ոչ ճիշտ բաշխում՝ տեղիք տալով անհիմն կրկնությունների, քանի որ բառակազմության հարցերը քառագիտության խնդիրն են:

5. Ինչպես դժվար չէ նկատել, ավանդական ըմբռնմամբ ձևաբանության կենտրոնական միավոր է դիտվում խոսքի մասը, և քննությունն էլ կատարվում է ըստ խոսքի մասերի: Անշուշտ, կարելի է լեզվի կառուցվածքն ուսումնասիրել նաև ըստ խոսքի մասերի (ինչպես դա մասամբ արվում է առանձին խոսքի մասերին նվիրված մենագրություններում), բայց այդ դեպքում ևս պետք է հստակ պատկերացում ունենալ լեզվի մակարդակների (կամ մասերի), նրանց առարկաների ու սահմանների մասին և խոսքի մասերից յուրաքանչյուրի հետևողական ու ամբողջական քննությունը տանել նրա իմաստաբանական, բառակազմական, ձևաբանական, շարահյուսական առանձնահատկությունների վերհանման և սահմանազատման ուղիով: Եթե ընդունենք, որ մակարդակային մոտեցմամբ լեզվի կառուցվածքը դիտվում է հորիզոնական կտրվածքով, ապա խոսքիմաստային քննության դեպքում այն առնվում է ուղղահայաց կտրվածքով: Իսկ ինչպես հայտնի է, ոչ մի հետևողական տեսության մեջ միևնույն առարկան (օբյեկտը) հնարավոր չէ միաժամանակ դիտարկել երկու հատվող (առավել ևս խաչվող) հայեցակետերով: Եվ քանի որ քերականության ավանդական ըմբռնման մեջ դա տեղի ունի, ապա այն չի կարող հետևողական տեսությունն լինել:

Լեզվի մակարդակային տեսության հետևողները մեծ մասամբ նույնական կարծիք չունեն մակարդակային միավորների ընտրության և գնահատության հարցում: Մի կողմ թողնելով այս առթիվ լեզվաբանական գրականության մեջ արտահայտված բազմաթիվ տեսակետներ, անդրադառնանք հայ իրականության մեջ արտահայտված երկու բնորոշ կարծիքի: Է. Աղայանը առանձնացնում է յոթ մակարդակային միավոր (տարրույթ, հնչույթ, ձևույթ, բառ, բառածև, շարահյուսույթ, ասույթ) և համապատասխանաբար յոթ մակարդակ<sup>5</sup>: Ըստ նրա, ձևաբանության հիմնական միավորը բառածևն է: Ի դեպ, մեզանում առաջինը ձևաբանության հիմնական միավորը բառա-

<sup>5</sup> Է. Բ. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., 1967, էջ 48:

ձևն է համարել Մ. Արեղյանը՝ տալով իր այդ ըմբռնման գործնական կիրառության շատ հաջող օրինակը<sup>6</sup> (նկատենք, որ մեզ համար տեսական հարցադրումից առավել կարևոր է նրա գործադրումը, քանի որ այս դեպքում է միայն հնարավոր համակողմանի և ճիշտ գնահատություն): Ընդհանրապես Մ. Արեղյանի տեսության ուշադիր դիտարկումը ցույց է տալիս, որ նրա հեղինակը ունեցել է լեզվի կառուցվածքի մակարդակային խորը ըմբռնում (առանց այդ տերմինի մասին գաղափար ունենալու) և ցավով պետք է նշել, որ նրա քերականությունը, ամբողջությամբ ատնված, երկար ժամանակ հետևորդներ չի ունեցել, չի զարգացվել, չի դարձել ավանդական:

Քեև է. Աղայանը հայերենի ամբողջական քերականություն չի գրել, բայց դատելով հիշյալ աշխատության մեջ յուրաքանչյուր մակարդակի մասին արված նրա հանգամանալից դատողություններից, կարելի է ասել, թե ձևաբանության սահմանների նրա ըմբռնումը չի նույնանում Արեղյանի ըմբռնման հետ: Է. Աղայանը ձևաբանության քննության նյութն է համարում գոյականը, բայր, ածականը, թվականը, դերանունը, մակբայը, այլև կապը, իսկ ըստ Արեղյանի, ձևաբանության առարկան միայն գոյականների և բայերի ձևերն են: Մյուս կողմից՝ է. Աղայանը կարծեք ձևաբանությունից դուրս է թողնում ձևույթների քննությունը՝ դրան հատկացնելով առանձին՝ ձևույթային մակարդակ: Բայց քանի որ դժվար է պատկերացնել ձևաբանությունն առանց բառահարաբերական ձևույթների (ձևորդների) քննության, ինչպես և դժվար է պատկերացնել բառակազմություն՝ առանց բառակազմական ձևույթների (արմատ և ածանց) քննության, ապա այնքան էլ պարզ չէ, թե ինչ հայեցակետերով պետք է այդ նույն միավորները դիտարկվեն երեք տարբեր (ձևույթային, բառային, ձևաբանական) մակարդակներում, որպեսզի կրկնությունների տեղիք շտրվի: Եթե ձևույթային մակարդակում պետք է միայն դասակարգվեն և սահմանվեն ձևույթները, ինչպես կարելի է եզրակացնել է. Աղայանի կատարած քննությունից, ապա այդքանի համար շարժե առանձին մակարդակ ընդունել, քանի որ դրանք պարզապես բուն նյութի քննությանը նախորդող անհրաժեշտ տեսական-ներածական դիտարկումներ են: Առանձին ձևույթային մակարդակ ընդունելով, մենք, կամա թե ակամա, հավասարության նշան ենք դնում իրականում տարբեր հարթությունների վրա գտնվող իրողությունների՝ բառակազմության և ձևաբանության (բառի և բառաձևի) միջև: Կարծում ենք, այս հարցում կարևոր դեր է խաղացել այն, որ միևնույն ձևույթ հասկացության տակ միավորվել են ինչպես բառակազմական, այնպես էլ բառահարաբերական արժեք ունեցող միավորները:

Է. Աղայանի հիշյալ գրքում խոսքի մասերը դասակարգված են բառային մակարդակում: Սակայն հետագայում հայերենի բառագիտությանը նվիրված նրա մենագրության մեջ<sup>7</sup> խոսքի մասերի քննությունը իսպառ րացակայում է:

Գ. Զահուկյանը «Լեզվի մակարդակները» հոդվածում ընդունում է երեք մակարդակային միավոր՝ հնչույթ, բառ, նախադասություն և համապատասխանաբար երեք մակարդակ՝ հնչույթային, նշանային, ստորոգային: Միաժամանակ յուրաքանչյուր մակարդակի ներսում նա առանձնացնում է երկու՝ հարացուցային և շարակարգային աստիճաններ՝ վերջիններիս համար ընդունելով նոր միավորներ՝ վանկ, բառակապակցություն, բարդ նախադաս-

<sup>6</sup> Մ. Արեղյան, Երկեր, հ. 2:

<sup>7</sup> Է. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984:

սուբյուկտները՝ Ճիշտ է, Գ. Զահուկյանը հեղինակ է հայոց լեզվի կառուցվածքի գրեթե բոլոր կողմերն ընդգրկող «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» աշխատության (նրանում բառագիտությունը ներկայացված է ամենաընդհանուր կողմերով), սակայն դրա մեջ խստորեն չեն կիրառված մակարդակների և աստիճանների մասին ունեցած նրա՝ վերոհիշյալ պատկերացումները (պատճառը թերևս այն է, որ իր ըմբռնումների վերջնական ձևավորմանը հեղինակը հանգել է այդ աշխատությունը գրելուց հետո)։ Մասնավորապես նշելի է, որ բառակապակցություններն այդտեղ համարված են շարահյուսության առարկա և հստակ որոշված չեն բայական բառակապակցության ու նախադասության սահմանները։

Գ. Զահուկյանի մակարդակային տեսությունը բոլոր նախորդ համանման տեսությունների նկատմամբ ունի որոշակի առավելություններ։ Դա ամենից առաջ արտահայտվում է մակարդակների և աստիճանների (կամ առանցքների) հստակ տարբերակմամբ, որի շնորհիվ հնարավոր է դարձել հիմնական (հարացուցային, մակարդակային) և երկրորդական (շարակարգային, կապակցական) միավորների առանձնացումն ու ճիշտ արժեքավորումը։ Ընտրված մակարդակային միավորները մեր կարծիքով առարկություն չեն հարուցում (թերևս հարց կարող է առաջանալ, թե ինչու ստորոգային մակարդակում որպես շարակարգային միավոր է ընտրված բարդ նախադասությունը և ոչ թե նախադասությունների կապակցությունը, որի ուսումնասիրությամբ զբաղվում է այսպես կոչված տեքստի լեզվաբանությունը)։ Հնչյունը, բառը, նախադասությունը լեզվի առանցքային, ամենապարտադիր միավորներն են և, ի տարբերություն մյուս բոլոր լեզվական միավորների, գիտակցության մեջ առկա են ինքնակա, ինքնարավ, անկախ, ամբողջական տեսքով։ Լեզուն ամենից առաջ հաղորդակցման միջոց է, իսկ հաղորդակցման դեր կատարում են նախադասությունները։ Բայց հաղորդելու համար անհրաժեշտ է նախ անվանել, իսկ անվանողական դեր կատարում են բառերը։ Անվանելու համար անհրաժեշտ են նյութական միջոցներ, որ են հնչյունները։ Ճիշտ է, հնչյունները իմաստակիր չեն, սոսկ շինանյութ են, բայց գիտակցվում են լեզվակիրների կողմից. թեև նրանք սովորաբար հանդես են գալիս միայն բառերի մեջ, բայց կարող են ըմբռնվել որպես ամբողջ, ոչ քաղադրիչ, անկախ միավորներ։ Հնչյունները միշտ վերարտադրվում են։

Պարզ կամ որպես այդպիսին ըմբռնվող բառերը գիտակցության մեջ առկա են որպես պատրաստի, նյութականացված, վերարտադրվող ամբողջական միավորներ։ Բարդություններն ու արտադրողական ածանցներով կազմությունները հանդես են գալիս պատրաստի, բայց նաև կաղապարային տեսքով. խոսողների գիտակցության մեջ կան լեզվի բոլոր կենսունակ բառակազմական տիպերը (կաղապարները), որի շնորհիվ էլ անընդհատ նորանոր բառեր են ստեղծվում (արտադրվում)։

Նախադասությունները գիտակցության մեջ առկա են միայն կաղապարների տեսքով՝ ոչ նյութականացված, ոչ պատրաստի. նրանք անընդհատ արտադրվում են (վերարտադրվում են միայն սերտած, անգիր արված նախադասությունները)։ Թեև միայն կաղապարների տեսքով, սակայն նախադասությունները նույնպես գիտակցվում են որպես ինքնարավ, ամբողջական միավորներ։

Լեզվի մյուս միավորներից ոչ մեկը չի բնորոշվում այդ երեք կենտրոնական միավորներին հատուկ հատկանիշներով՝ ամբողջականությամբ, ան-

<sup>8</sup> Գ. Բ. Джаукян. Общее и армянское языкознание, Ереван, 1978, с. 30.

կախությամբ, ինքնաբավությամբ: Վերջենք ձեռնովք, որը որպես մակարդակային միավոր ընդունողները մեծ թիվ են կազմում: Այն գիտակցության մեջ երբեք անկախ հանդես չի գալիս, այլ միայն որպես բառի (բառաձևի) բաղադրիչ, հետևաբար և չի կարող համարվել ինքնակա, ամբողջական միավոր: Ոչ մի լեզվակիր չի կարող առանձին վերցրած ասել, թե ինչ են նշանակում (կամ պարզապես ինչ են) ի-ն, է-ն, ալ-ը, յա-ն, բայց եթե առաջարկենք քաղի, վազ, բունակ, փայտյա ձեռք, ապա բոլորն էլ գրեթե անսխալ կորոշեն հիշյալ ձեռնովքները՝ բացատրելով դրանց հիմնական նշանակությունները: Ճիշտ է, ձեռնովք լեզվի նվազագույն իմաստակիր միավորն է, բայց ոչ ինքնակա: Լեզվի ինքնակա, ամբողջական նվազագույն իմաստակիր միավորը բառն է: Այսպիսով, եթե որպես մակարդակային ենք ընդունում ինքնաբավ միավորները, ապա ձեռնովք պետք է դուրս թողնենք: Ձեռնովքի հարցը լուծվում է բառը (բառաձևը) ըստ կազմության քննելիս: Ավելացնենք նաև, որ ձեռնովք բնորոշելիս պետք է ելնել բառից և ոչ թե հընչյուններից, քանի որ ձեռնովքները առանձնացվում են (ճանաչվում են) բառի վերլուծության և ոչ թե հնչյունների համակցության հետևանքով: Ձեռնովք բառի (բառաձևի) նվազագույն իմաստակիր բաղադրիչն է:

Հարցը բավական բարդանում է, երբ խոսքը վերաբերում է բառաձևին: Ի տարբերություն ձեռնովքի, այն կարող է գիտակցվել որպես ամբողջ, որպես ոչ բաղադրիչ, սակայն դժվար է այն համարել անկախ և ինքնակա միավոր, քանի որ բացահայտ է նրա կապը բառի հետ: Բառաձևը, ինչպես բառը և բառակապակցությունը, ունի անվանողական դեր, բայց, ի տարբերություն վերջիններիս, այն ունի նաև հարաբերողական իմաստ և հենց այս իմաստով է այն կարևորվում լեզվի մեջ: Բառաձևի համար առաջնայինը հարաբերողական և ոչ թե անվանողական իմաստն է: Բառաձևի և բառի հարաբերությունը լիովին տարբերվում է բառի և հնչյունի կամ նախադասության և բառի հարաբերությունից: Եթե վերջին հաշվով բառը կազմված է հընչյուններից, իսկ նախադասությունը՝ բառերից, ապա բառաձևը չի կազմված բառերից. բառաձևը միևնույն բառն է՝ անված որևէ հարաբերությամբ: Ուրեմն՝ բառաձևը ինքնուրույն մակարդակային միավոր չէ, սակայն բոլոր հիմքերը կան այն համարելու ենթամակարդակային միավոր: Թեև Գ. Ջահուկյանը հիշյալ հոդվածում ենթամակարդակների մասին չի խոսում, բայց մենք կարծում ենք, որ նշանային մակարդակի մեջ երկու տարբեր՝ բառագիտական և ձևաբանական ենթամակարդակների առանձնացումը ոչ միայն չի հակասում նրա տեսությանը, այլև ենթադրվում է նրա ուսումնասիրություններից: Այսպես, հայաց լեզվի տեսությանը նվիրված վերոհիշյալ աշխատության մեջ նա ձևաբանություն բաժինը ներկայացնում է երկու մասով: Առաջինում, որ ունի «Բառերի խմբերը և կազմությունը» ընդհանուր վերնագիրը, քննված են խոսքի մասերն ու բառակազմությունը, իսկ երկրորդում՝ հոլովումն ու խոնարհումը, այսինքն՝ բառաձևերը: Նկատենք, որ այս երկրորդ մասը «Լեզվի մակարդակները» հոդվածում անվանված է հարացուցային կամ բուն ձևաբանություն և իր սահմաններով գրեթե համընկնում է Մ. Աբեղյանի ձևաբանության հետ (տարբերությունները քննության եղանակների և արդյունքների մեջ են):

Այսպիսով, մենք ընդունում ենք Գ. Ջահուկյանի մակարդակային ըմբռնումը՝ բառային (նշանային) մակարդակի մեջ առանձնացնելով երկու ենթամակարդակ՝ բառագիտական և ձևաբանական: Բառագիտության քննության առարկան բառն է՝ բացարձակ (բառարանային) ձևում. ձևաբանության առարկան՝ բառաձևը: Բառագիտության բաժիններն են՝ բառաիմաս-

տաքանութիւն (ուսումնասիրում է բառի բովանդակային կողմը) և բառակազմութիւն (ուսումնասիրում է բառի կառուցվածքը):

Լեզվի կառուցվածքի աստիճանական՝ ներքևից վերև ուսումնասիրութեան ժամանակ խոսքի մասերը առաջին անգամ երևան են գալիս բառախմաստաբանութեան մեջ, հետևաբար հենց այդտեղ էլ պետք է կատարվի նրանց դասակարգումն ու առաջին քննութիւնը:

Սովորաբար բառի համար առանձնացվում են երկու կարգի իմաստներ՝ ընդհանուր և մասնավոր: Ընդհանուր իմաստները ընդունված է անվանել քերականական (կամ բառաքերականական), իսկ մասնավորը՝ բառային: Բառախմաստաբանութեան խնդիրը, որպես կանոն, սահմանափակվում է միայն մասնավոր՝ բառային իմաստների քննութեամբ: Այս տեսակետը չի կարելի արդարացի համարել հետևյալ պատճառներով:

Բառիմաստը մի օրգանական ամբողջութիւն է և դժվար է որոշել, թե բառի համար նրա քաղաղորդչներից ո՞րն է ավելի էական՝ մասնավորը, թե՞ ընդհանուրը: Վերցնենք աշխատել-աշխատեմք, ընթանալ-ընթացք, լողալ-լող բառային զույգերը: Սովորաբար զույգերից յուրաքանչյուրի մասնավոր բառային իմաստը համարվում է նույնական, թեև ոչ ոք չի կասկածում, թե նրանց ամեն մի անդամ առանձին, մյուսից բոլորովին տարբեր բառ է (դըրանք նույնիսկ հոմանիշներ չեն համարվում): Ուրեմն՝ դրանց տարբեր բառեր դարձնողները ընդհանուր՝ խոսքիմասային իմաստներն են: Եթե բառի ընդհանուր (քերականական, խոսքիմասային) իմաստները դուրս թողնենք բառախմաստաբանութեան ոլորտից, ապա հետևողական լինելու դեպքում, ոչ միայն հիշյալ կարգի զույգերի բառական տարբերութիւնները պիտի չընդունենք բառային մակարդակում, այլև բառագիտութեան ոլորտից դուրս պիտի թողնենք ընդհանրապես դերանունները, որոնք զուրկ են բառային մասնավոր իմաստներից: «Փերականական իմաստները, — իրավացիորեն գրում է է. Աղայանը, — բառի բովանդակութեան անբաժան մասն են կազմում»<sup>9</sup>: Մենք այն կարծիքին ենք, թե լիիմաստ, այսինքն՝ բուն բառերը չեն կարող գոյութիւն ունենալ առանց խոսքիմասային իմաստների: Քերիմաստ բառերը այդպիսիք են դիտվում ամենից առաջ խոսքիմասային իմաստ չունենալու պատճառով: Ինչ մնում է բառի ընդհանուր իմաստների՝ քերականական ուղղվածութիւն և արժեք ունենալուն, ապա պետք է նկատել, որ վերջին հաշվով քերականական արժեքից զուրկ չեն նաև բառի մասնավոր իմաստները. այսպես, եզր, գագաթ, կտուր և այլ բառեր ներգոյականի իմաստը սովորաբար արտահայտում են տրականի ձևերով, և դա պայմանավորված է նրանց բառային մասնավոր իմաստներով:

Ինչպես վերը նշել ենք, խոսքիմասային իմաստը արտահայտութեան որևէ այլ ձև չունի, քան բառն է: Լեզուն այդ իմաստը դրել է բառի և ոչ թե քերականական այլ հատուկ ձևի մեջ: Հետևաբար, այն քերականական լիեելուց առաջ բառային իմաստ է:

Այսպիսով, ընդհանուր, մասնավորապես, խոսքիմասային իմաստը բառիմաստի անկապտելի բաղադրիչն է, բառը ձևավորող անհրաժեշտ գործոնը, ուրեմն և պետք է ներկայացվի բառագիտութեան մեջ:

Բառախմաստաբանութեան մեջ խոսքի մասերը պետք է ներկայացվեն բացառապես իմաստային հատկանիշներով. այստեղ պետք է կատարվի նրանց իմաստաբանական դասակարգումը<sup>10</sup>, որի արդյունքներն էլ կդրվեն

<sup>9</sup> է. Աղայան, *Նշված աշխատութիւնը*, էջ 45:

<sup>10</sup> Հմմտ. Ա. Խաչատրյան, *Խոսքի մասերի հարցումային դասակարգումը*, «Բանբեր Երևանի համալսարան», 1988, № 3, էջ 56—65:



Հաջորդ մակարդակներում ու ենթամակարդակներում կատարվելիք ուսումնասիրությունների հիմքում: Խոսքի մասերից յուրաքանչյուրի ոչ իմաստաբանական առանձնահատկությունները կբացահայտվեն և կուսումնասիրվեն համապատասխան բաժիններում. բառակազմական հատկանիշները՝ բառակազմության, ձևակազմական հատկանիշները՝ ձևաբանության, շարահյուսական հատկանիշները՝ շարահյուսության մեջ: Մեր այս ըմբռնումը թեև չի նույնանում, բայց չի էլ հակասում Մ. Աբեղյանի քերականական տեսությանը:

**А. Е. ХАЧАТРЯН**—Традиционное и уровневое понимание предмета морфологии.— В современных вузовских и академических грамматиках армянского и русского языков делается попытка совмещения традиционного и уровневого пониманий структуры языка. Предметом морфологии в этих грамматиках, с одной стороны, считаются слово и его формы, а с другой—части речи (грамматические классы слов). Уровневое учение языка предполагает, что каждый уровень должен иметь свою основную единицу, которая и должна стать предметом его изучения. Части речи никак нельзя считать единицами структуры языка и, в частности, морфологии. Они характеризуются не только морфологическими, но и лексикологическими и синтаксическими особенностями. Более того, некоторые части речи не имеют каких-либо существенных морфологических свойств. Таким образом, части речи не могут быть предметом морфологии. В структуре языка существует три целостные, автономные, самодовлеющие, независимо осознанные единицы—фонема, слово, предложение. В соответствии с этим представляется логичным выделить три основных уровня: фонетический, лексический, синтаксический. Морфология входит в состав лексического уровня как отдельный подуровень. Единицей морфологии является словоформа.